ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 12 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

1948 թ. դեկտեմբերի 2-ին նշվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հակոբ Մանանդյանի ծննդյան 75-ամյակը։ Այդ առթիվ հրավիրվեց Ակադեմիայի հասարակական գիտությունների հանդիսավոր նիստ։

Ներածական հակիրճ ճառով նիստը բաց արեց գիտությունների ակադեմիկոս քարտուղար Դ. Ղափանցյանը։

Բնութագրելով ականավոր պատմաբանի գիտական գործունեությունը, Դ. Ղափանցյանը ասաց.

— Ռուսաստանում և արտասահմանում ստանալով հանդերձ իր ժամանակին լավագույն կրթությունը, երիտասարդ Մանանդյանը, ուրիշ շատ հայագիտների նման չկարողացավ ցարիզմի պայմաններում, էջմիածնի ճղճիմ մթնոլորտում խորացնել իր սիրած մասնագիտությունը։ Միայն սովետական շրջանում նա հնարավորություն ունեցավ ամբողջովին դրսևորելու իր գիտնականի խոշոր ընդունակությունները և նվիրվելու պատմագիտությանը։ Նա եղավ մեր համալսարանի առաջին ռեկտորը։

Մանանդյանը եղել է ամենաակտիվ դեկավար աշխատողներից մեկը մեր այժմյան Ակադեմիայի նախակարապետը հանդիսացող Գիտության և Արվեստի ինստիտուտում։ Շատ երիտասարդ գիտնականներ եղել են նրա աշակերտները։ Նույնիսկ այժմ, իր 75-ամյա տարիքում, սա չի դլանում մասնակցել ասպիրանտներ պատրաստելու գործին։

Ակադեմիկոս Մանանդյանը բարձր գնահատականի է արժանացել նրանով, որ ընտրվել է Միութենական Ակադեմիայի անդամ։

Ակադեմիկոս Մանանդյանը որոնող և ստեղծագործող գիտնական է, չի սահմանափակվում ու կաշկանդվում ավանդական հայագիտության շրջանակներով, ազգայնական կեղծ պարուրանքներով, սիրում ու գնահատում է հայ ժողովրդի դարավոր անցյալը։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի կյանքի ու գործունեության մասին դեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի հին և միջին դարերի պատմության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ս. սրեմյանը։

— ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հակոբ Համազասպի Մանանդյանին,— ասում է դեկուցողը — ճանաչում է սովետական ամբողջ գիտական հասարակությունը, որպես ականավոր հայագետ-պատմաբանի և բանասերի, որպես հեղինակ մի շարք խոշոր հետազոտությունների, որոնք նվիրված են հին և միջնադարյան Հայաստանի սոցիալական և տնտեսական կյանքի ուսումնասիրությանը։

Խոսելով ակադեմիկոս Մանանդյանի կենսագրությունն հիմնական գծերի մասին, դեկուցողը հակիրճ կերպով բնութագրում է նրա առաջին շրջանի գիտական մի շարք ուսումնասիրությունները։

Ակադեմիկոս Մանանդյանի առաջին գիտական աշխատությունն է „Beitrage zur albanischen Geschichte“ ուսումնասիրությունը, որը ներկայացվել է որպես դոկտորական դիսերտացիա և Իենայի համալսարանից ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան։

1899 թվին, Մանանդյանը, էքստերն քննություն հանձնելով Պետերբուրգի Համալսարանի Արևելյան ֆակուլտետում, արժանանում է առաջին աստիճանի դիպլոմի, իսկ 1909 թվին էքստերն քննություն հանձնելով Յուրևի Համալսարանի (ներկայումս՝ Տարտու, Էստոնական ՍՍՌ) իրավաբանական ֆակուլտետում, նույնպես արժանանում է առաջին աստիճանի դիպլոմի։

Ունենալով հանդերձ այսպիսի փայլուն կրթություն և խոշոր գիտնականի անուրանալի տաղանդ, Մանանդյանը նախասովետական շրջանի հայ իրականության սահմանափակ պայմաններում հնարավորություն չի ունեցել լիովին դրսևորելու իր գիտական կարողությունները։ Ապրելու հոգսը հարկադրում է նրան գիտական աշխատանքից ավելի զբաղվելու մանկավարժությամբ ու այլ գործերով։ Աշխատում է դպրոցներում որպես ուսուցիչ, որպես երդվյալ հավատարմատար։

Չնայած այս դժվարին պայմաններին, հրատարակում է մի շարք ուսումնասիրու-

թյուններ։ 1903 թվին Մարբուրգում լույս է տեսնում նրա „Nonnos, Die Scholien zu funf Reden des Gregor von Nazianz" աշխատությունը. մի տարի անց՝ 1904 թվին «Դավիթ Անյաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ»։ Լույս է տեսնում նրա մի այլ աշխատություն՝ «Մեկնություն ստորագրությանցն Արիստոտելի ընծայալ Էլիասի իմաստասերիս» և այլն։

Անդենլով ակադեմիկոս Մանանդյանի սովետական շրջանի հարուստ գիտական գործունեությանը, գնդուցողը ցույց տվեց, որ շնորհիվ գիտության ու գիտնականների նկատմամբ Սովետական իշխանության լայն ու բազմապիսի հոգատարության, Մանանդյանը կարողացել է վերջին երեք տասնամյակների ընթացքում լիովին դրսևորել խոշոր գիտնականի իր ընդունակությունները, տալ մի շարք կապիտալ աշխատություններ, որոնք ոչ միայն Սովետական Հայաստանում, այլև ամբողջ Սովետական Միության մեջ, հայտնի են դարձնում նրա անունը որպես ականավոր գիտնականի։

Սովետական շրջանում դրսևորվում են Մանանդյանի խոշոր կարողությունները հատկապես պատմագրության բնագավառում։ Այս ուղղությամբ նրա առաջին լույսը աշխատությունն է հանդիսանում «Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքների շրջանում - ուսումնասիրությունը, որը հեղինակի՝ 1921 թվին կարդացած դասախոսություններն են և ձեռագրի իրավունքով լույս է տեսել Երևանում, 1922 թվին։

Դրանից հետո Մանանդյանը գրում է մի շարք աշխատություններ, նվիրված նախարարական Հայաստանի սոցիալական և տնտեսական կյանքին։ 1925 թվից սկսած լույս տեսած այդ աշխատությունները հիմք են դնում Հայաստանի պատմական անցյալի գիտական ուսումնասիրությանը՝ տնտեսական զարգացման տեսակետից։ Նշված հետազոտություններից ուշագրավ են հատկապես հետևյալները՝ «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում», «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» և այլն։

Միջնադարյան Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի առանձին պրոբլեմների լուսաբանման տեսակետից խոշոր նշանակություն ունեն չափագիտական, ինչպես նաև ճանապարհների ու վայրերի տեղագրությունը, ռազմական արշավանքների ուղղությունները ուրվագծող այն մի շարք հետազոտությունները, որ հրատարակել է ակադեմիկոս Մանանդյանը վերջին տարիների ընթացքում։ Դրանցից են, օրինակ՝ «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», «Երեւոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը», «Գետինգերյան քարտեզի Hariza կայարանը», „Средневековый итинерарий в армянской рукописи X столетия", „Круговой путь Помпея в Закавказье", „Цель и направление подготовлявшегося Нероном Кавказского похода", „О местонахождении Caspia via и Caspia portae".

Հին մղոնաչափերի և ռազմական արշավանքների, ուղղությունների այս ճշտումը հիմք է տալիս ակադեմիկոս Մանանդյանին, պարզաբանելու անտիկ և հայկական աղբյուրներում հանդիպող մի շարք մութ ու սակավ ծանոթ աշխարհագրական անունները։ Այս կարգի պրոբլեմների լուսաբանմանն են նվիրված նրա «Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի խնդիրների մասին» գիտական հոդվածների ժողովածուն, «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտությունները»։

Ակադեմիկոս Մանանդյանը խոշոր ծառայություններ է մատուցել հելլենիստական դարաշրջանի Հայաստանի վիմագիր արձանագրությունների վերծանման և լուսաբանման գործում («Արմավիրի հունարեն արձանագրությունը նոր լուսաբանությամբ», «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը»)։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի այս հետազոտությունները հիմք դարձան ավելի լայն ընդհանրացումներին։ Հին և միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքի առանձին հարցերի ուսումնասիրության հանրագումարը հանդիսացավ „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э — XV в. н. э)" ծավալուն աշխատությունը։ Այս մենագրությունը լավագույն տեղեկատուն է հանդիսանում բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են Հայաստանի, Կովկասի և առհասարակ Մերձավոր Արևելքի տնտեսական պատմությունը։ Այս աշխատության հետ սերտ կապված է մի այլ մենագրություն՝ «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Գետինգերյան քարտեզի։ Նախարարական Հայաստանի հասարակարգի հարցերին վերաբերող հոդվածներն հանրագումարն է հանդիսանում նրա «Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան)» ընդարձակ մենագրությունը։

Բնորոշ է, որ այն ժամանակ, երբ Ն. Ադոնցի՝ „Армения в эпоху Юстиниана" աշխատության մեջ նախարարական Հայաստանի ասմիջական արտադրողների՝ շինականների մասին խոսվում է ի միջի այլոց, Հ. Մանանդյանի աշխատության մեջ շինականներին նվիրվում է

հատուկ ընդարձակ գլուխ։ Այս աշխատությունը «Նոր ներդրում է սովետական պատմագրության մեջ և իր նշանակությամբ ու արժեքով կարելի է համեմատել ակադեմիկոս Վ. Ռ. Դրեկովի «Կիևյան Ռուսիա» մենագրության հետ։

Գիտության մեջ խոշոր ավանդ է հանդիսանում Մանանդյանի «Տիգրան Բ. և Հռոմը» կապիտալ գործը, որը մենագրական առաջին աշխատությունն է՝ նվիրված պետական ականավոր գործիչ և զորավար Տիգրան Բ-ին։

Չնայած այն մեծ հետաքրքրությանը, որ եղել է Տիգրան Բ-ի անձնավորության և նրա ժամանակաշրջանի վերաբերյալ, Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանի մասին մինչ այդ չէր գրվել մի լուրջ մենագրություն։

Հայագետ-ասորագետները սովորաբար հենվում էին բուրժուական պատմագիրների՝ Մոմզենի, Ռենանի և Ֆերրերոյի երկերի վրա, որոնք Հայաստանի պատմությունը դիտում էին իբրև մի կախյալ և կցված Հռոմի կամ Պոնտոսի պատմություն։ Այդ պատմաբանները, որպես հռոմեական մեծապետական քաղաքականության յատաղովներ, պոնտա-հռոմեական պատերազմները դիտել են իբրև «բարբարոս Արևելքի» պայքար՝ «քաղաքակրթված Արևմուտքի» դեմ։ «Այնինչ,— գրում է հեղինակը,— արևելյան երկրների կողոպտման և ֆինանսական շահագործման նպատակով ստրկատիրական Հռոմի ձեռնարկած այդ պատերազմները տարվում էին ոչ թե «բարբարոսական» Արևելքի դեմ, այլ առաջադիմական երկու միապետների դեմ, որոնք ամեն կերպ ձգտում էին վերակազմակերպել իրենց պետությունները՝ լայնորեն հիմնելով նրանց մեջ հունական տիպի և հելլենական կուլտուրայի քաղաքներ, ինչպես և զարգացնելով առևտուրը, արհեստները և արդյունաբերությունը» (էջ 9)։

Հ. Մանանդյանի հիմնական ծառայությունն այն է, որ նա նորից վերանայել ու մանրազնին քննական վերլուծման է ենթարկել Հայաստանի մասին սինտիկ հեղինակներից մեզ հասած բոլոր տեղեկությունները։ Նա հատկապես կանգ է առնում հելլենիստական չեզոք աղբյուրների սակավաթիվ վկայությունների վրա, որոնք անտիկ Հայաստանի մասին ավելի օբյեկտիվ և ճշմարտացի տեղեկություններ են տալիս։ Հ. Մանանդյանը քննադատում է հռոմեական պաշտոնական աղբյուրները հելլենիստական և հայկական ավելի ուշ շրջանի աղբյուրների հետ և, հենվելով նրանց համեմատական և քննադատական ուսումնասիրության վրա, հին Հայաստանի պատմության շատ և շատ փաստերի տալիս է միանգամայն նոր լուսաբանություն։ Նա ցույց է տալիս, որ ստրկատիրական Հռոմը Արևելյում չի տարածել «եվրոպական քաղաքակրթությունը», այլ ընդհակառակը, Հռոմը քայքայել է հելլենիստական կուլտուրան և ոչնչացրել իր ուրված երկրների ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հետագա զարգացման բոլոր նախադրյալները։

Շնորհիվ Հ. Մանանդյանի այս խոշոր աշխատության՝ հնարավոր դարձավ մի կողմ նետել այդ էպոխայի մասին գիտության մեջ տիրապետող սխալ պատկերացումները։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի այս բոլոր աշխատությունները ամփոփվել են վերջերս լույս տեսած նոր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» կապիտալ աշխատության առաջին հատորում, ուր տրված է Հայաստանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև Արշակունիների թագավորությունը Հայաստանում (այսինքն՝ 6-րդ դարից մ. թվ. ա. մինչև մ. թվ. 66 թվականը)։ Այս աշխատության լույս ընծայումը խոշոր երևույթ է հայկական և ընդհանրապես սովետական պատմագրության պատմության մեջ։ Այնտեղ միանգամայն նոր մեկնաբանությամբ տրված է հետտիգրանյան ժամանակաշրջանը, որը վերջանում է Հայաստանում Արշակունիների հարստության հաստատմամբ (55 թվ. մ.թ. ա.—66 թ. մ. թ.)։ Այս բաժինը տրված է հայերի հռոմեական զավթիչների և նրանց արբանյակների դեմ անընդհատ պայքարի տեսանկյունով։

Բազմաթիվ էջերում հեղինակը երևան է հանում հայերի անձնուրաց և տոկուն պայքարը հռոմեական նվաճողների դեմ։

Հ. Մանանդյանի մի շարք կապիտալ հետազոտությունները՝ ինչպես «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեվտինգերյան քարտեզի», «Հուսաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», «Տիգրան Բ-ն և Հռոմը», «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը և այլն, արժեքավոր ներդրում են հանդիսանում հայագիտության բնագավառում, հարստացրել են հայ ժողովրդի պատմական անցյալի ուսումնասիրությունը նոր փաստերով և առաջին անգամ լույս են սփռում այդ պատմության բազմաթիվ մութ էջերի վրա։

Սովետական հասարակայնությունը և պատմական գիտությունը մատուցած այս ծառայությունների համար Հ. Մանանդյանը բարձր գնահատության է արժանացել սովետական ժողովրդի, մեր պարտիայի և կառավարության կողմից։ 1935 թ. նոյեմբերի 28-ին, համաձայն Հայկական ՍՍՌ ԿԳԿ Նախագահության որոշման՝ Հ. Մանանդյանին շնորհվում է գիտու-

թյան վաստակավոր գործչի կոչում։ 1938 թվին, երբ նշանակված էին Համամիութենական Գիտությունների Ակադեմիայի ընտրությունները՝ նա ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի և Երևանի Պետական Համալսարանի կողմից առաջադրվում է Ակադեմիայի իսկական անդամության թեկնածու։ Հ. Մանանդյանի թեկնածությունը ջերմ ընդունելություն է գտնում Սովետական Միության գիտական ողջ հասարակայնության կողմից։ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր Ժողովում (1939 թ. հունվարի 29-ին) նա ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ։

Հիտլերյան բարբարոսների դեմ սովետական ժողովրդի մղած Հայրենական Մեծ պատերազմի օրերին, երբ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության որոշմամբ հիմնվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, անվանի գիտնականը ընտրվեց նոր Ակադեմիայի իսկական անդամ։ 1945 թ., ՍՍՌՄ Գերագույն Սովետի որոշմամբ ակադեմիկոս Մանանդյանը պարգևատրվում է աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Այժմ,— վերջանում է իր զեկուցումը ընկ. Երեմյանը,— նշելով ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի ծննդյան 75-ամյակը, ցանկանում ենք նրան նորանոր հաջողություններ և մաղթում ենք, որ նա սովետական պատմագիտությունը հարստացնի կապիտալ նոր հետազոտություններով, ունենա գիտական է՛լ ավելի բեղմնավոր գործունեություն, ի փառս սովետական պատմագիտության։

Ս. Երեմյանի զեկուցումից հետո Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության հանձնարարությամբ հոբելյարին ողջունեց ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ Նշելով Հայաստանի պատմության և ֆիլոլոգիայի ասպարեզում Մանանդյանի մատուցած խոշոր ծառայությունները, նա ասաց.

— Ակադեմիկոս Մանանդյանը մեր ռեսպուբլիկայի մեծագույն պատմաբանն է։ Նա իր գիտական ուսումնասիրությունների մեջ հատուկ ուշադրություն է դարձնում սոցիալ-տնտեսական հարցերի վրա, որոնց ուսումնասիրությունը միակ գիտական ճանապարհն է ժողովուրդների պատմությունը ճիշտ հասկանալու համար։ Մանանդյանը, առաջինը հայ պատմագրության մեջ, իր հմտալից ուսումնասիրություններում կարողացավ երևան հանել հայ շինականի վիճակը, ցույց տալ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատկերը։ Բազմաթիվ նոր փաստերով ակադեմիկոս Մանանդյանը պայքարել է արևմտաեվրոպական բուրժուական պատմագրության սխալ և հակագիտական կոնցեպցիաների դեմ, վեր հանելով հայ ժողովրդի հերոսական ազատագրական պայքարը հռոմեական նվաճողների դեմ՝ Տիգրան երկրորդի ժամանակաշրջանում։

Ընդհանուր պատմության համար մեծ նշանակություն ունեն նրա այն հետազոտությունները, որոնք վերաբերում են չափագիտության խնդիրներին։

Մանանդյանը ոչ միայն պատմաբան է, այլև ֆիլոլոգ, տեքստերի հրատարակիչ և աղբյուրագետ։

Ակադեմիկոս Մանանդյանը խոշոր աշխատանք է կատարել հրատապ կադրերի պատրաստման ու աճեցման բնագավառում։ Մեր ռեսպուբլիկայի պատմաբաններից շատերը նրա աշակերտներն են։

Հուսով ենք, որ հարգելի հոբելյարը այսուհետև ևս շարունակի իր օգտակար և բեղմնավոր գործունեությունը գիտության ու նոր կադրերի պատրաստման բնագավառում։

Գիտությունների Ակադեմիայի Նախագահության անունից ցանկանում եմ ակադեմիկոս Մանանդյանին երկար կյանք, առողջություն և նույնպիսի փայլուն գիտական գործունեություն։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության անունից ողջույնի խոսք ասաց պրոֆեսոր Ալիզադեն։

— Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունը,— ասաց նա,— ինձ լիազորել է սրտագին ողջույն հաղորդել Հակոբ Համազասպի Մանանդյանին՝ սովետական պատմագիտության ավագագույն ներկայացուցիչներից մեկին, Կովկասի պատմության ականավոր մասնագետին։

Պրոֆեսոր Ալիզադեն արժեքավորում է ակադեմիկոս Մանանդյանի աշխատությունները որպես Անդրկովկասի բոլոր ժողովուրդների պատմության գիտական ուսումնասիրման հավաստի աղբյուր։

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի կողմից ողջույնի խոսք է ասում համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, դոցենտ Հ. Ժամկոչյանը։ Նա արժեքավորելով Մանանդյանի գիտական ուսումնասիրությունները, կանգ է առնում հատկապես նրա երկարամյա բեղուն մանկավարժական գործունեության վրա։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի անունից հոբելյարին ողջունում է Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտու-

շար, պատմական գիտությունների թեկնածու Ի. Առաքելյանը։

— Մեր պատմագրության մեջ,— ասում է նա.— Դուք առաջինը պատմական պրոցեսը ուսումնասիրեցիք տնտեսական զարգացման հետ սերտ առնչված, վեր հանելով նախարարական Հայաստանի սնմիջական արտադրողների՝ շինականների սոցիալական և իրավական վիճակը։ Մանրազնին ուսումնասիրելով աշխարհագրական, չափագիտական, հնագիտական և այլ տվյալներ, դուք լուծեցիք պատմական աշխարհագրության և մետրոլոգիայի մի շարք հանգուցային ու առեղծվածային հարցերը, որոնց նշանակությունը չի սահմանափակվում հայագիտության շրջանակներում։

Ձեր պրպտող միտքը, մեծ էրուդիցիան, ռուսական ու համաշխարհային պատմագրության լավատեղյակությունը, սկզբնաղբյուրները քննադատորեն հաղթահարելու և օգտագործելու հմտությունը, ինչպես և հայ ու կլասիկ տեքստերի օրինակելի հրատարակություններն ու բազմաթիվ աշխատությունները Ձեզ դարձրին սովետական պատմագիտության ավագ սերնդի ականավոր դեմքերից մեկը, որից շատ բան ունեն սովորելու մեր պատմաբանները։

Խ. Աբովյանի անվան Երևանի Պետական Մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի անունից հոբելյարին ողջունեց Վ. Պարսամյանը։ Նա հակիրճ կերպով բնութագրելով Մանանդյանի հիսուն տարվա գիտական անխոնջ աշխատանքը, նրա բազմաբովանդակ աշխատությունները, ասաց.

— Մենք գիտենք, որ նախասովետական շրջանում Դուք, ինչպես նաև բազմաթիվ հայ գիտնականներ, զուրկ եք եղել գիտական աշխատանքի պայմաններից, տարիներ շարունակ երազել եք աշխատանքի նորմալ պայմաններ ստեղծել Էջմիածնում, Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում և Պետերբուրգում, բայց այդ Ձեզ չի հաջողվել։ Սովետական իշխանությունը բոլոր գիտական աշխատողների, այդ թվում և Ձեզ համար, ստեղծեց գիտական աշխատանքի լայն հնարավորություններ։ Սովետական իշխանության տարիները եղան Ձեր գիտական գործունեության ամենաբեղմնավոր տարիները։

Այնուհետև՝ թվարկելով Սովետական իշխանության տարիներին ակադեմիկոս Մանանդյանի հրատարակած գիտական հմտալից աշխատությունները, պրոֆ. Պարսամյանն ասաց.

— Ձեր պրպտող ու խորաթափանց մտքի և բեղմնավոր գրչի վաստակները ավելի քան հինգ տասնյակի հասնող հետազոտությունները հարստացրին մեր սովետական պատմագիտությունը, լուսաբանեցին, կամ նպաստեցին լուսաբանելու հայոց պատմության բազմաթիվ մութ ու կնճռոտ հարցերը։

Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Դրականության ինստիտուտի անունից ողջույնի խոսք ասաց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Հ. Ղանալանյանը։ Արժեքավորելով Մանանդյանի մի շարք մենագրությունները, նշելով նրանց տեղը հայ պատմագրության մեջ, նա ասաց.

— Ակադեմիկոս Մանանդյանի գիտական ոռոնող միտքը չի սիրել տրորված ճանապարհներով ընթանալ։ Ինչպես ճարտարապետ Բորոս Թորամանյանը մեր ճարտարապետական հորեմների հայկական կոթողների, Զվարթնոցի, Տեկորի տաճարի բեկորների հիման վրա վերականգնում էր այդ հուշարձանների կերպարն ու ձևերը, հարտարապետական կառուցվածքները, այնպես էլ ակադեմիկոս Մանանդյանը մատենագրական սղբյուրներում եղած հին Հայաստանի սոցիալական շարժումների, դասակարգային պայքարի և երկրի ներքին կյանքը պատկերող կցկտուր տեղեկությունների հիման վրա, բացահայտում է հին ժամանակների Հայաստանի տնտեսական կյանքը, սոցիալական հարաբերությունները։ Լուսաբանելով հին Հայաստանի տնտեսական և հասարակական կյանքի այդ երևույթները, նա լույս է սփռում նաև այդ շրջանի հայ գրականության վրա, օգնում է հասկանալու և գնահատելու վերջինիս էությունը։

Գիտությունների Ակադեմիայի Մաշտոցի անվան Լեզվի ինստիտուտի կողմից հոբելյարին ողջունեց ինստիտուտի գիտական քարտուղար, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ս. Ղազարյանը։

— Դուք համոզիչ փաստերով հաստատել եք,— ասաց նա,— ֆեոդալիզմի գոյությունը Հայաստանում և ընդհանուր գծերով տվել եք հայ ֆեոդալիզմի հիմնական առանձնահատկությունների նկարագիրը։

Այնուհետև խոսելով հոբելյարի «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատության մասին, համարելով այդ գործը որպես բանասիրական լուրջ և հմտալից մի հետազոտություն, որի մեջ առաջին անգամ նկարագրված է հունաբան դպրոցի ներկայացուցիչների գործունեությունը, նշված է այդ դրպրոցի առաջացման պատճառներն ու զարգացման շրջանները, Ս. Ղազարյանն ասաց.

— Ձեր այդ աշխատությունը կարևոր ուղեցույց է, որը չի կարող անտեսել հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմությամբ զբաղվող մասնագետը։ Դուք նորը դիտողություններ եք արել հայերեն մի շարք բառերի, առանձնապես,

գեոդեզիական հարաբերություններն արտացոլող տերմինների ստուգարանության ու ճշգրտման անհրաժեշտություն։

Գիտությունների Ակադեմիայի Պատմական քանգարանի անունից ողջույնի խոսք ասաց ավագ գիտ. աշխատակից Ա. Շահնազարյանը։

— 45—47 տարի առաջ,— ասաց նա,— դեռևս Նորգյան ճեմարանի ուսուցիչ եղած ժամանակվանից ես վկա եմ եղել Մանանդյանի այդ շրջանի գործունեությանը։ Դաժան էին պայմանները։ Մեր բոլորի սիրելի Մանանդյանը բավականություն էր ստանում միայն ու միայն աշակերտների մեջ, որոնց սովորեցնում էր իր մասնագիտությունը։ Այն ժամանակվա սահմանափակ միջավայրը և ծանր պայմանները հնարավորություն չէին տալիս նրան զարգացնելու այն բնական ձիրքը, որ նա ուներ։ Միայն Սովետական իշխանության հաստատումից հետո, երբ հնարավորություն տրվեց բոլոր գիտնականներին դրսևորել իրենց գիտական կարողություններն ու ունակությունները, ակադեմիկոս Մանանդյանը կարողացավ շարունակել իր սիրած աշխատանքը և միմյանց հետևից լույս ընծայել հմտալից ու մեծարժեք իր գիտական ուսումնասիրությունները։

Ռուսական Մանկավարժական ինստիտուտի կողմից հոբելյարիս ողջունեց տնտեսական գիտությունների թեկնածու Ս. Հովհաննիսյանը, որը հակիրճ բնութագրելով Մանանդյանի մի շարք ուսումնասիրությունները, ցույց տվեց այն նորը, որ հոբելյարը մտցրել է հայ պատմագրության մեջ և գրավել իր արժանի տեղը սովետական գիտնականների առաջավոր շարքերում։

Այնուհետև ընթերցվեցին Հ. Մանանդյանի անունով հոբելյանի կապակցությամբ ստացված ողջույնի հեռագրերը։ Ողջույնի հեռագրեր էն ստացվել ՅՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Նախագահությունից, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և փիլիսոփայության գիտությունների բաժանմունքից, Արևելագիտության ինստիտուտից, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Էստոնիայի, Լիտվայի, Ուզբեկստանի Գիտությունների Ակադեմիաներից և առանձին գիտական կազմակերպություններից, Սովետական Միության մի շարք խոշոր գիտնականներից։

Ողջույնի հեռագրերի ընթերցումից հետո վերջին խոսքի համար ձայներ տրվում է հոբելյարին։

Ակադեմիկոս Մանանդյանն ասում է.

— Ընկերներ, ես խորապես զգացված եմ այն սիրալիր ուշադիր վերաբերմունքից, որ ցույց տվիք ինձ իմ ծննդյան 75-ամյակի և գիտական գործունեության 50-ամյակի առթիվ գիտական հիմնարկները և առանձին գիտաշխատողները Հայաստանի ու նաև եղբայրական սովետական ռեսպուբլիկաների։ Ես իմ սրտագին շնորհակալությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր ինձ շնորհավորական հեռագրեր են ուղարկել ու նաև բոլոր ներկա եղողներին այստեղ նիստում։

Իմ գիտական աշխատանքների մասին այսօր բավական արդեն այստեղ խոսեցին և խոսեցին այնպես, ինչպես այդ ընդունված ու սովորական է հոբելյանական հանդիսավոր նիստերի ժամանակ։ Իսկ ես կցանկանայի մի քանի խոսք ասել ոչ այնքան այն մասին, թե անցյալում ինչ աշխատություններ եմ կատարել, որքան այն մասին, թե ինչ աշխատություններ պիտի կատարվեն ամենամոտ ապագայում։

Ձեզ բոլորիդ լավ հայտնի է, որ բեղմնավոր ու լուրջ գիտական աշխատանքը հնարավոր եղավ Հայաստանում, ինչպես և անդրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկաներում, միայն նրանց մեջ Սովետական իշխանության հաստատումից հետո, երբ ամենուրեք բացվեցին գիտական հիմնարկներ և ազգային համալսարաններ. Միայն և միայն շնորհիվ իմաստուն լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության ստեղծվեցին մեզ մոտ նպաստավոր պայմաններ գիտության զարգացման համար և ես. հնարավորություն ստանալով ամբողջապես նվիրվելու իմ սիրած գիտական ստեղծագործական աշխատանքին՝ կարողացա մեծ ոգևորությամբ ձեռնարկել համառ աշխատանքի և ուսումնասիրել հին և միջնադարյան Հայաստանի պատմությունն ու կուլտուրան։

Ես արդեն իմ աշխատություններում մատնանշել եմ, որ հայ ժողովրդի պատմությունը, որն ունի ավելի քան երկու և կես հազարամյակի տևողություն, ամենասերտ կերպով կապված է եղել համաշխարհային մեծ պետությունների պատմության հետ։

Եվ, անշուշտ, այդ է հենց պատճառը, որ Հայաստանի պատմությունը քննարկված է, սեղմ ու միջանկյալ կերպով, եվրոպական գիտնականների գլխավորապես այն երկրում, որոնց նպատակն է եղել ուսումնասիրել ոչ թե Հայաստանի, այլ հարևան մեծ պետությունների պատմությունը։

Պատմագիտական գրեթե բոլոր հայկական երկերում, ինչպես և հին Հայաստանի պատմությանը նվիրված ռուսերեն ու ֆրանսերեն աշխատություններում, ինչպես ես մատնացույց եմ արել, հայերի հին անցյալին վերաբերվող դեպքերի նկարագրությունն ու լուսաբանությունը մեջ են բերված համարյա անփոփոխ եվրոպական գիտնականների, գլխավորապես վերոհիշյալ երկերից։ Ինձ թվում է, որ եվրոպական

ակնավոր գիտնականների երկերի անքննադատական հենց. այդ օգտագործումը գլխավոր թերություններից մեկն է հայ պատմագրության։

Մեր երիտասարդ գիտաշխատողները պետք է հետևաբար նկատի ունենան, որ չի կարելի հայ ժողովրդի պատմությունը քննարկել ու շարադրել բանաքաղորեն, օգտվելով նախորդ աշխատություններից, այլ անհրաժեշտ է նոր ուշադիր քննության ենթարկել սկզբնաղբյուրները բուն տվյալները. և այդ է, որ հնարավորություն է տալիս նոր ձևով բացատրելու վիճելի հին պրոբլեմները և լուսաբանելու պատմական անցքերը Հայաստանի պատմության շրջանակում։

Իմ «Տիգրան Դ և Հռոմը» աշխատության մեջ ես մատնացույց էի արել նաև այն, որ մինչև իսկ եվրոպական ամենաանվանի պատմագետների երկերում նկատելի է հակագիտական հատուկ տենդենցիա՝ Արևմուտքի իդեալականացում, իբրև բարձր կուլտուրայի կրողի, և ակներև արհամարհական վերաբերմունք դեպի Արևելքը և արևելյան ժողովուրդները, որոնք համարվում են արդահատելի ցածր երևույթ։

Մեր երիտասարդ պատմաբանները պետք է, ուրեմն, նաև նկատի ունենան, որ մենք պարտավոր ենք կատուցել մեր սեփական, սովետական դիտությունը։ Հայաստանի պատմությանը նվիրված նորագույն աշխատությունների խնդիրն է լինելու ոչ թե հայ ժողովրդի անցյալի իդեալականացումը, այլ այդ անցյալի ճշգրիտ և լգեղեցկացրած լուսաբանությունը, որը հիմնված պետք է լինի սկզբնաղբյուրների մանրախույզ ու քննական վերլուծության վրա ու նաև պատմագիտական նախորդ աշխատությունների սխալ ընդհանրացումների վերաքննության վրա։

Իսկ ամենայուրջ թերությունը Արևմտյան Եվրոպայի պատմագիտությանն այն է, որ եվրոպական գիտնականները, նշելով Արևելքի ժողովուրդների հետամնացությունը և նրանց հասարակական կյանքի անշարժությունը, հնարավոր են համարել ուսումնասիրել միայն նրանց արտաքին քաղաքական պատմությունը և գրեթե անտես են արել սոցիալական-տնտեսական ներքին պատմությունը թե Արևելքի այլ երկրների և թե, հատկապես, նաև հին Հայաստանի։ Ինչպես հայտնի է, հին Հայաստանի ներքին կյանքը շատ քիչ է ուշադրության առնվել, նմանապես և հայ ժողովրդի պատմությանը նվիրված նախաոկտոյուցիոն շրջանի ոլորը հին և նոր տեսություններում և ձեռնարկներում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ոևոլյուցիան սովետական պատմագետների առջև դրեց նոր կարևորագույն խնդիրներ և հասկանալի է, որ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը ևս պետք է կառուցվեր ավելի բարձր մակարդակի վրա։ Մեր ամենաառաջին խնդիրը եղավ մեր ժողովրդի պատմությունը բացատրել սոցիալ-տնտեսական զարգացման և դասակարգային պայքարի տեսանկյունով։

Արևմտաեվրոպական պատմական գիտությունը նա՝ այս խնդիրը լուսաբանում էր սխալ։ Մոմզենը, օրինակ, իր «Հռոմեական պատմության» մեջ պնդում է, որ ասիացիներն անսահման հակում ունեն պասիվության և ընդունակ չեն ինքաբերաբար ոտքի ելնել շահագործող իշխանությունների դեմ։ Այս կարծիքը, իհարկե, բացարձակապես սխալ է։ Ինչպես ես իմ աշխատությունների մեջ բազմիցս մատնանշել եմ, կրոնական դարավոր պայքարը, որը կատաղի կերպով մղվում էր Մերձավոր Արևելքում և, մասնավորապես նաև հին Հայաստանում, արդադանը էր սոցիալական պայքարի ֆեոդալական հասարակության դասակարգերի միջև։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սովետական պատմաբանների առջև դրված խնդիրները շատ բարդ էին և խիստ պատասխանատու։ Հարկավոր էր վերստուգել այն ամենը, ինչ որ արել էին հայագետների նախորդ սերունդները և, առաջին հերթին, անհրաժեշտ էր հավաքել ու վերանայել սկզբնաղբյուրների մեջ եղած նյութերը, որ վերաբերվում էին Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությանը։

Ուստի ես, սկսած 1922 թվից, ես հրատարակել եմ, բացի բազմաթիվ բանասիրական, լեզվագիտական և պատմական-աշխարհագրական աշխատություններից, հատկապես նաև հոդվածներ ու մենագրություններ, որոնք նվիրված են հին Հայաստանի տնտեսական և սոցիալական կյանքի ստանձին խնդիրների լուսաբանությանը։

Սկզբնական իմ այս ուսումնասիրությունները ունեին նախապատրաստական բնույթ և նյութ էին ծառայելու Հայաստանի ներքին կյանքի մասին ավելի ընդհանուր մեծ աշխատությունների համար, որոնք այսօր մանրամասն այստեղ հիշատակվեցին։

Ընկերներ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ոևոլյուցիան մեծ հեղաշրջում առաջ բերեց գիտության, տեխնիկայի և արվեստի ասպարեզներում և, մասնավորապես նաև պատմական գիտության ասպարեզում։ Ռևոլյուցիան մեզ դաստիարակել է ու օգնել է ավելի լավ հասկանալու և իմաստավորելու մեր ժողովրդի

պատմությունը և կուլտուրան։ Աշխարհիս ոչ մի երկրում պետությունն այնպիսի հոգատար վերաբերմունք չունի դեպի գիտությունն ու գիտնականները, ինչպես մեր Սովետական երկրում։

Շնորհակալություն եմ հայտնում նորից քե այսօրվա նիստին ներկա եղողներին և քե հեռագրերով ինձ շնորհավորողներին և խոստանում եմ, որ ես իմ հետագա աշխատանքի ընթացքում կաշխատեմ արդարացնել ինձ ցույց տրված մեծ վստահությունը ու նաև ամեն ջանք գործ կդնեմ իրագործելու այն խնդիրները, որ սովետական գիտնականներին առաջադրել է մեր զեկավար ու ուսուցիչ Մեծ Ստալինը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1948 թվականի հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով ժողովն, ասաց.

— Ընկերներ, քեպետ մեզ մոտ մեկ ամսից հետո լինելու է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովի նստաշրջան, ինչպես լինում է միշտ, սակայն Ակադեմիայի նախագահությունը նպատակահարմար գտավ այսօր նշանակել ընդհանուր ժողովի մի նիստ, որտեղ կլսվի Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանի զեկուցումը՝ «Նոր տարրական մասնիկներ կոսմիկական ճառագայթների կազմում» թեմայով, և կկատարվեն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի երկու նոր իսկական անդամների ընտրությունները։

Պետք է նկատել, որ ընդհանուր ժողովի այսօրվա նիստին դրվող հարցերը— ինչպես գիտական, այնպես էլ կազմակերպական հարցերը— ունեն չափազանց կարևոր նշանակություն։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Ի. Ալիխանյանն այսօրվա իր զեկուցումով մեզ հաշվետվություն պետք է ներկայացնի այն խոշորագույն և բացառիկ կարևորություն ունեցող աշխատանքներից մեկի մասին, որը կատարվում է մեր Ակադեմիայում և որը, ինչպես բոլորին հայտնի է, ունի համաշխարհային նշանակություն։

Ահա քե ինչու մեր Ակադեմիայի իսկական անդամները և ուրիշ շատերը չեմ ցանկություն հայտնեցին վերը հիշված զեկուցումը լսել մեր Ակադեմիայի ընդհանուր ժողովում։

Բացի դրանից՝ մեր առաջ ծառացած են խոշոր խնդիրներ, որոնք առաջադրվում են կյանքի հողմից։ Այդ կարգի խնդիրներից մեկն է՝ մեր Ակադեմիայի ամբողջ աշխատանքը մոտեցնել սոցիալիստական շինարարությանը։

Բիոլոգիական հարցերի շուրջը Վ. Ի. Լենինի անվան Գյուղատնտեսական Գիտությունների Համամիութենական Ակադեմիայի օգոստոսյան սեսիան, որն ավարտվեց միչուրինյան բիոլոգիայի հաղթանակով, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բիոլոգիական գիտությունների Բաժանմունքի և Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքի վերջերս կայացած միացյալ սեսիան, մեր առաջ խնդիր դրեցին որոշ վերակառուցում կատարել Բիոլոգիական և Գյուղատնտեսական գիտությունների Բաժանմունքների աշխատանքների մեջ, այսինքն, ինչպես ասացի, աշխատանքը մոտեցնել կյանքին, մոտեցնել սոցիալիստական շինարարությանը։

Այս տեսակետից չափազանց մեծ նշանակություն կունենա մեր Ակադեմիայի իսկական անդամների կազմի ուժեղացումը, մի կողմից՝ գյուղատնտեսական ու բիոլոգիական գիտությունների և, մյուս կողմից՝ այլ գիտությունների բնագավառում աշխատող նոր ընկերներով։

Այդ գիտությունների թվում մեզ համար խոշոր նշանակություն ունի երկրաբանությունը, որը չափազանց կարևոր է երկրի ընդերքում թաքնված բնական հարստություններն ուսումնասիրելու տեսակետից։ Մեր Ակադեմիայի իսկական անդամների կազմը լրացնելու կապակցությամբ կառավարության կողմից բացված է իսկական անդամության երկու վականս